

Բանալի բառեր՝ տնտեսություն, աշխուժացում, ծավալ, կապիտալ, ծրագիր:

ՀՏԴ 336

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ատենախոսության թեմա՝
Բանկային գործունեության միջազգայնացման ազդեցությունը ազգային տնտեսությունների վրա (Հայաստանի օրինակով)

Գիտական դեկավար՝
Թորոս ԹՈՐՈՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Վարդան ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԵՊՀ Տնտեսագիտության և Կառավարման ֆակուլտետի Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա ասպիրանտ

Սեպտեմբերի կարևոր է ուսումնասիրել թե Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը ինչպիսի տնտեսության պայմաններում է գործում, թե այդ պայմանները ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ բանկային համակարգի զարգացման վրա: Մյուս կողմից հետաքրքիր կլինի բացահայտել թե իր կողմից բանկային համակարգը ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ ընդհանուր տնտեսական իրավիճակի բարելավման գործում:

Մեծ հետաքրքրություն է առաջացնում 2017թ-ի տնտեսական և ֆինանսական ցուցանիշների ուսումնասիրությունը, բանի որ այդ տարի Հայաստանի տնտեսության մեջ արդեն հստակորեն նկատելի են դարձել միտումներ դեպի դրական փոփոխություններ:

2017թ. ՀՀ-ում գրանցվել է կանխատեսվածից բարձր տնտեսական աճ, որին միաժամանակ նպաստել են մի շարք հանգամանքներ: Նախ, գլոբալ տեսանկյունից համաշխարհային տնտեսությունը շարունակել է իր աճը՝ 2017թ. գրանցելով 3.6% տնտեսական աճ, որի մեջ զարգացած երկրների բաժինը եղել է 2.2%, իսկ զարգացող երկրների բաժինը կազմել է 4.6%: ՀՀ տնտեսական աճին նպաստել են նաև գործընկեր երկրներում տնտեսական աճի տեմպերի արագացման ներքո հայկական արտահանման ընդլայնումը, բնակչության եկամուտների աճը, այնպես էլ ՀՀ տնտեսությունում ընթացող դրական փոփոխությունները: 2017թ. Տնտեսական աճը պայմանավորված է արդյունաբերության և ծառայությունների ճյուղերում բարձր աճով: Վերջին տարիներին կառավարության և ԿԲ-ի կողմից իրականացրած հարկաբյուջետային և դրամավարկային բաղաբաժանությունները կարելի է անվանել ընդլայնողական, որի արդյունքում 2017թ. գրանցվել է բավական բարձր՝ 7.5% տնտեսական աճ¹:

Այս աճը հիմնականում ապահովվել է վերջին տարիներին արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում զգալի աճի շնորհիվ: Արդյունաբերությունը աճել է 12.6%-ով, իսկ ծառայությունները՝ 14.4%-ով:

Գյուղատնտեսության ոլորտում արձանագրվել է 3%-ի անկում, որը հիմնականում պայմանավորված է երաշտի պատճառով հացահատիկի արտադրության ծավալների կրճատման հետ:

Սակայն, շինարարության ոլորտում դադարել է 2013թ-ից շարունակվող անկումը, և 2.2%-ի աճ է գրանցել:

Այս բոլոր տվյալներն ուսումնասիրելով, չնայած դեռ վաղ է հստակ գնահատականներ տալ, կարելի է մտածել որ ՀՀ տնտեսությունն իր համար ճանապարհ է հարթում 2008թ. ճգնաժամից ի վեր ձգվող լճացումից դուրս գալու համար:

Տարվա ընթացքում համախառն պահանջարկի վերականգնմանը նպաստել են ինչպես արտաքին պահանջարկի վերականգնումը, այնպես էլ երկրի տնտեսությունում տեղի ունեցող դրական զարգացումները: Մասնավոր սպառումը և ներդրումները ավելացել են, ինչը պայմանավորվել է տնտեսության վարկավորման վերականգնմամբ, մասնավոր դրամական փոխանցումների ինչպես նաև արտաքին պահանջարկի աճով:

ՀՀ ԿԲ կողմից իրականացված հետազոտության համաձայն գործարար միջավայրի 2017թ. ցուցանիշի կայունացումը, վկայում է գրեթե բոլոր ոլորտներում ներդրումային միջավայրի բարելավման մասին: Դա պայմանավորված է գործարար շրջանակների լավատեսությամբ:

ՀՀ բանկային համակարգի 2016-2017թթ. զարգացումները հարկավոր է դիտարկել. ՀՀ Կենտրոնական բանկի 2015թ. հրապարակած «ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2016-2018թթ.» զեկույցում², որտեղ արտացոլված են բանկերի մշակած ռազմավարություններն ու հիմնական ցուցանիշների կանխատեսումները:

Չեկույցի համաձայն, դիտարկվող ժամանակահատվածում բանկերն ակնկալում են ընդհանուր ակտիվների աճ՝ միջինում տարեկան 8.8%-ի չափով: Այն հիմնականում պայմանավորված կլինի վարկային պորտֆելի ավելացմամբ (միջին տարեկան աճ՝ 13.3%), ինչի արդյունքում վարկերի տեսակարար կշիռն ակտիվներում 2015թ. վերջի համեմատ կաճի 7.6 տոկոսային կետով՝ կազմելով 66,4%:

Որոշ բանկեր կարծում են, որ խոշորագույն խաղացողները կշարունակեն միջոցներ ներգրավել արտասահմանից, ինչը, ամենայն հավանականությամբ, կխոչընդոտի վարկավորման եւ ավանդների ներգրավման տոկոսադրույքների բարձրացումը:

Բանկերի մի մասն էլ գտնում է, որ ավանդների տոկոսադրույքները կմնան բարձր, ինչն էլ, իր հերթին, բարձր կպահի վարկերի տոկոսադրույքները: Բանկերի մի մասն էլ էական տատանումներ չեն ակնկալում:

¹ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն / Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-դեկտեմբերին / 31 հունվարի 2018:

² ՀՀ Կենտրոնական բանկ / https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/BizPlaN2016_%20Final%20%20Public25.07.pdf:

Բանկային հատվածում կարծում են, որ կենսաթոշակային բարեփոխումների հետագա զարգացումները եւ ապահովագրական շուկայի փոփոխությունները կավելացնեն դրամային երկարաժամկետ ռեսուրսների ծավալները:

Բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերով կանխատեսվում է, որ 2016-2018թթ. կապիտալն ընդհանուր առմամբ կավելանա 79%-ով:


Ակտիվների շահութաբերությունը (ROA) այս տարիներին կգտնվի (-0.7)%-2% միջակայքում, իսկ կապիտալի շահութաբերության ցուցանիշը (ROE) կտատանվի (-4.2%) – 9.7% սահմաններում:

Կարելի է ասել, որ 2016 թ. բանկային համակարգը հիմնականում ընթացել է մշված ուղղությունով, գրանցելով աճի բավական լավ ցուցանիշներ:

2017թ. հունվարի 1-ի դրությամբ բանկային ոլորտի ակտիվներն 2016թ. հունվարի համեմատությամբ աճել են 19.8%-ով և հասել 4,141 մլրդ ՀՀ դրամի: Նույն ժամանակահատվածում Հայաստանի բանկային ոլորտի ակտիվների միջին եկամտաբերության գործակիցը (ROA) եղել է 0.42%, ինչը 0.12 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նույն գործակցի համեմատությամբ: Այդ ժամանակաշրջանում Հայաստանի բոլոր բանկերի կողմից տրամադրված վարկերը նախորդ տարվա համեմատությամբ աճել են 21.2%-ով և հասել են մոտ 2,578 միլիարդ ՀՀ դրամի: Հայաստանի բանկային ոլորտի վարկային պորտֆելի և ընդհանուր ակտիվների հարաբերության գործակիցը կազմել է 62.3%: Համաձայն ՀՀ ԿԲ-ի, իրացվելիության գործակիցը կազմել է 32.5%: Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի բանկային ոլորտի Չուտ պահուստային ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազել են 3.9% -ով՝ հասնելով 61.3 միլիարդ ՀՀ դրամի: Բանկերի ավանդների հաշվեկշիռը աճել է 25.9% -ով՝ հասնելով 2,341 միլիարդ ՀՀ դրամի: Հայաստանի բանկային ոլորտի համար վարկային պորտֆել/ ավանդ հարաբերակցությունը կազմել է 1.10: Բանկերի ընդհանուր կապիտալը հասել է 669 միլիարդ ՀՀ դրամի, աճելով 24.2%-ով: Հայաստանի բանկային ոլորտի կապիտալի միջին եկամտաբերության գործակիցը (ROE) եղել է 2.65%: Հաշվետու ժամանակահատվածի համար կապիտալ/ակտիվներ հարաբերակցությունը կազմել է 16.2%: Հայաստանի բանկային ոլորտի կապիտալի համարժեքության գործակիցը կազմել է 20%: 2017թ. հունվարի 1-ի դրությամբ բանկային համակարգն ուներ 395 միլիարդ ՀՀ դրամի ընդհանուր եկամուտ, որը 3.9%-ով ավել էր 2016թ. նույն ժամանակահատվածի ընդհանուր եկամուտների ցուցանիշից: Հայաստանի բանկային համակարգի զուտ տոկոսային մարժան կազմել է 4.8%: Հաշվետու ժամանակահատվածի համար ծախս/եկամուտ հարաբերակցությունը կազմել է 57.8%: Բանկերի հարկումից առաջ զուտ շահույթը կազմել է 22.3 միլիարդ ՀՀ դրամ: Բանկային համակարգի հարկումից հետո զուտ շահույթը կազմել է 16 միլիարդ ՀՀ դրամ, աճելով 58.9%-ով: Հայաստանի բանկային համակարգի շահութաբերության մարժան կազմել է 4.1%³:

2016թ. Հայաստանի բանկային համակարգի ակտիվներ/ՉՆԱ և բանկային համակարգի վարկեր/ՉՆԱ գործակիցները կազմել են համապատասխանաբար 78.7 և 45.8: Շարունակելով տաս տարի շարունակվող աճի տրենդը:

Գծապատկեր 1. ԲՅՎ/ՉՆԱ և ԲՎ/ՉՆԱ հարաբերակցությունը⁴



2016թ. հատկանշական է բանկային համակարգում նրանով որ այդ թվականի դեկտեմբերի 31-ին էր լրանում ԿԲ 2014թ. սահմանած վերջնաժամկետը, համաձայն որի առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նախկին 5 մլրդ ՀՀ դրամի փոխարեն պետք է հասցվեր 30 մլրդ ՀՀ դրամ մակարդակի:

Համաձայն ԿԲ դիրքորոշման կապիտալի նվազագույն չափի ավելացման պահանջի նպատակն է իրականացնել բանկերի միաձուլումներ և միացումներ, ինչը կհանգեցնի բանկերի խոշորացման և կապահովի մասշտաբի դրական էֆեկտ՝ նպաստելով բանկային համակարգի կողմից ավելի որակյալ ու մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը և կձևավորի առողջ մրցակցային միջավայր:

³ KPMG-Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրություն/2016թ. 4-րդ եռամսյակի արդյունքներ/ Փետրվար, 2017:

⁴ Կազմվել է հեղինակի կողմից՝ հիմնվելով ՀՀ Կենտրոնական բանկի հաշվետվությունների վրա:

2015թ. և հատկապես 2016 թ. որոշ բանկեր համալրել են իրենց նորմատիվային ընդհանուր կապիտալը բաժնետերերի, այդ թվում՝ նոր բաժնետերերի կատարած ներդրումների և բաժնետոմսերի թողարկման ու տեղաբաշխման միջոցով: 2015 թ. և 2016 թ. ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր նորմատիվային կապիտալը ավելացել է 38.6%-ով (175 մլրդ դրամով) և տարեվերջի դրությամբ կազմել է 627.1 մլրդ դրամ:

Տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում բանկային համակարգում 01.01.2017թ. դրությամբ գործում էին 17 առևտրային բանկեր: Այս 17 բանկերից կազմված և համապատասխան փոփոխությունների ենթարկված 33 բանկային համակարգը 2017թ. ցույց է տվել հետևյալ արդյունքները:

2016 թվականի համեմատությամբ բանկային ոլորտի ակտիվներն աճել են 6.7%- ով և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հասել 4,362 միլիարդ ՀՀ դրամի: 2017թ. Ակտիվների միջին եկամտաբերության գործակիցը (ROA) եղել է 0.9%, ինչը 0.48 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նույն գործակիցի համեմատությամբ: 2017թ. տվյալներով Հայաստանի բոլոր բանկերի կողմից տրամադրված վարկերը 2016թ. համեմատությամբ աճել են 3.6% ով և հասել են մոտ 2,650 միլիարդ ՀՀ դրամի: Վարկային պորտֆելի և ընդհանուր ակտիվների հարաբերության գործակիցը կազմել է 60.7%: Համաձայն ՀՀ ԿԲ-ի, Հայաստանի բանկային ոլորտի իրացվելիության գործակիցը կազմել է 32.1%, իսկ Չուտ պահուստային ծախսերը նվազել են 10.3% -ով՝ հասնելով 58.2 միլիարդ ՀՀ դրամի: Բանկերի ավանդների հաշվեկշիռը աճել է 9.9%-ով՝ հասնելով 2,556 միլիարդ ՀՀ դրամի: Հայաստանի բանկային ոլորտի համար վարկային պորտֆել/ ավանդ հարաբերակցությունը կազմել է 1.04: Բանկերի ընդհանուր կապիտալը հասել է 701 միլիարդ ՀՀ դրամի, որը 5.8%-ով գերազանցում է 2016թ. ցուցանիշը: 2017թ. Հայաստանի բանկային ոլորտի կապիտալի միջին եկամտաբերության գործակիցը (ROE) եղել է 5.6%: Հաշվետու ժամանակահատվածի համար կապիտալ/ակտիվներ հարաբերակցությունը կազմել է 16.1%: Համաձայն ՀՀ ԿԲ-ի, 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի բանկային ոլորտի կապիտալի համարժեքության գործակիցը կազմել է 18.5%: 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակահատվածում բանկային համակարգն ուներ 439 միլիարդ ՀՀ դրամի ընդհանուր եկամուտ, որը 8.5%-ով ավել էր 2016թ. նույն ժամանակահատվածի ընդհանուր եկամուտների ցուցանիշից, իսկ բանկային համակարգի զուտ տոկոսային մարժան կազմել է 4.9%: Ծախս/եկամուտ հարաբերակցությունը կազմել է 53.3%: 2017թ. բանկերի հարկումից առաջ զուտ շահույթը կազմել է 48.4 միլիարդ ՀՀ դրամ, իսկ բանկային համակարգի հարկումից հետո զուտ շահույթը կազմել է 38.2 միլիարդ ՀՀ դրամ, ինչը 15.6%-ով ավելի է՝ 2016թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ: 2017թ. Հայաստանի բանկային համակարգի շահութաբերության մարժան կազմել է 8.7%⁵:

Օգտագործված գրականություն և աղբյուրներ

1. ՀՀ Կենտրոնական բանկ

[/https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/BizPlaN2016_%20Final%20%20Public25.07.pdf](https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/BizPlaN2016_%20Final%20%20Public25.07.pdf)

2. ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն

Ներկայացվել է 15.01.2018թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.

⁵ KPMG-Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրություն/2016թ. 4-րդ եռամսյակի արդյունքներ/ Փետրվար, 2017: